ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ֆիզիկոս, դոկտոր, պրոֆեսոր Պետրոս Բեզիրգանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոց հ. 4 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏՐՈՍ ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետրոս Բեզիրգանյանը ծնվել է 1916 թվականին Ալաստանում (Ջավախք):

1938թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1951թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում:

1954թ. պաշտպանել է թեկնածուական, 1969թ.՝ դոկտորական դիսերտացիա:

1961թ. ղեկավարել է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնը:

Պետրոս Բեզիրգանյանը շուրջ 300 գիտական աշխատանքների, 30-ից ավելի գյուտերի, 2 մենագրության, ինչպես նաև մի շարք դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Պետրոս Բեզիրգանյանի ղեկավարությամբ Երևանի պետական համալսարանի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնում ստեղծվել է բյուրեղների կառուցվածքային անկատարելիությունների ռենտգենադիֆրակցիոն տոպոգրաֆիկ պատկերները տեսանելի դարձնող ռենտգենահեռուստատեսային եզակի համակարգ, որի համար հեղինակը ստացել է Հայկական ՍՍՀ պետական մրցանակ:

Պետրոս Բեզիրգանյանին գիտամանկավարժական գործունեության համար շնորհվել է Հայկական ՍՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Պ. Բեզիրգանյանը մահացել է 1994 թվականին:

Դոկտոր, պրոֆեսոր Պետրոս Բեզիրգանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոց հ.4 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի կողմից:

Հաշվի առնելով Պետրոս Բեզիրգանյանի մեծ ավանդը ֆիզիկամաթեմատիկական գիտությունների զարգացման բնագավառում և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏՐՈՍ ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Պետրոս Բեզիրգանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏՐՈՍ ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետրոս Բեզիրգանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ